ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մարտի 2026 թվականի N 282 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 987-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) հավելվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը «ենթակայանների,» բառից հետո լրացնել «գազաբաշխիչ կետերի, հենասյունների,» բառերով.

2) հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետից հանել «, օրենքով սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն անցած» և «՝ պայմանով, որ ներդրումային ծրագրի փաթեթում հաստատված լինի նաև հողամասի տեղակայումը՝ ՎԻ ՋԻ ԷՍ-84 (WGS-84) ԱՐՄՐԵՖ 02 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով» բառերը.

3) հավելվածի 1-ին կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) ընդերքօգտագործման աշխատանքների իրականացման (օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության, լեռնահատկացման ակտի և ընդերքօգտագործման պայմանագրի առկայությամբ).».

4) հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերը պետական և համայնքային սեփականություն հանդիսացող օբյեկտների (ներառյալ գերեզմանատների) կառուցման և սպասարկման.».

5) հավելվածի 1-ին կետի 11-րդ ենթակետը «պոմպակայանների» բառից հետո լրացնել «, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների» բառերով.

6) հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետում «մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը» բառերը փոխարինել «Օրենքով սահմանված ժամկետներում ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով Կադաստրի կոմիտեում հաշվառված» բառերով.

7) հավելվածի 1-ին կետի 14-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) այլ հողատեսքերի, արոտավայրերի և խոտհարքների 4-րդ և 5-րդ գնահատման խմբերի հողամասերը՝ արդյունաբերական, արտադրական, էներգետիկ օբյեկտների, հասարակական նշանակության շինությունների, պահեստարանների կառուցման և սպասարկման.».

8) հավելվածի 1-ին կետի 15-րդ ենթակետից հանել «համայնքներին պետության կողմից անհատույց սեփականության իրավունքով հողերի փոխանցման ժամանակ առաջացած» բառերը.

9) հավելվածի 1-ին կետի 17-րդ ենթակետից հանել «, ենթակառուցվածքների» բառը, իսկ «կառուցման» բառից հետո լրացնել «և սպասարկման» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ